

ՀԳ

ԳԻՐՔ № 25


**ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ
ՄԱՏՁԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԵԿԸՆ ԳՈՐԾՄԳԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

ԵՐԵՎԱՆ

1928 թ.



ՍԴԻ
39272

ԳԻՐԲ № 20

**ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ
ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

A 2346
II




ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԵՎՈՆ ԳՐԹԱԳԻՐ ԿԱՄԻՏԵՏ

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.



ՀԱՅԳՈՒԼԻԳՐԱՖԻ 1 ՏՊԱՐԱՆ

ՊԱՏՎԵՐ 1992

ԳՐԱՌ. 790 Բ. ՏԻՐԱԺ 1200

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻՆ ԱՌԸՆԹԵՐ 1928 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ՝ ԳԱՎԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ԿԱԶՄ-ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻ, ԳԱՎՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒ-ԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԵՂԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 1928 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ԱՇԽԱ- ՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

20. Ընդգծել, զոր գյուղատարածուների խնայողական իր անհրաժեշտ տեղին և զբաղել գյուղերում, և նրանց զբաղենքով՝ խորհուրդները հաջողությամբ կարողանում են կատարել հասարակական կարգի պահպանություն, հասարակական բարեկարգություն զարգացման վերաբերյալ և այլ հանձնարարություններ:

21. Գյուղատարածուների խնայողական աշխատանքների հետագա հաջող ընթացքն ապահովելու նպատակով առաջարկել տեղերին:—

ա) գյուղատարածուների զբաղենք յայտիսի աշխատանքներ, զորոնք չեն նախատեսված Կենտգործկոմի 1926 թ. մեարտի 16-ի մոբիլիացիայի (Ո.Կ.Ժ. 1926 թ. № 4, հոդ. 31) և Արդժողկոմատի ու Ներքգործողկոմատի համապատասխան հրահանգով (ՈԿԺ 1926 թ. № 4 (2), հոդ. 32), ինչպես, սրիճակ, գրասենյակ մաքրելը, փողոցներ մաքրելը և այլն:

բ) կատարած աշխատանքի ծառայություն ժամանակամիջոցը կրթության և զբաղենքի միջև յերկու շաբաթ, զորի հետևանքով համապատասխան փոփոխություն մտցնել Կենտգործկոմի 1926 թ. մեարտի 16-ի մոբիլիացիայի և Արդժողկոմատի ու Ներքգործողկոմատի հրահանգի մեջ:

դ) Հանձնարարել Արդժողկոմատին ու Ներքարժառկոմատին վերանայել գյուղական կատարածուների վերաբերյալ 1926 թ. հունիսի 28-ի հրահանգը խմբագրական տեսակետից և կենտրոնականի վարչական և հիշյալ հրահանգի մի քանի հոդվածների մեջ գոյություն ունեցող հակասությունը վերացնել:

դ) գյուղատնտեսական պարտականությունների մեջ մտնող նաև փոստը գյուղից մինչև գաղատակային կենտրոն տանելը, յեթև տարածությունն այդ յերկու կետերի միջև 10 կիլոմետրից ավելի չէ: Այն դեպքում, յերբ հիշյալ վայրերի միջանկյալ տարածությունը 10 կիլոմետրից ավելի չէ, այլալ գյուղի կառուցածու փոստը հասցնում և հարկման գյուղը, և գիտատնցիոն կարգով փոստը հասցնում և գաղատակային կենտրոն: Հիշյալ պարտականությունը մացնել կենտրոնականի 1926 թ. փետրվարի 1-ի վարչական և Արդժողկոմատի ու Ներքարժառկոմատի 1926 թ. հունիսի 28-ի հրահանգի համապատասխան հոդվածի մեջ:

ե) Հանձնարարել Ներքարժառկոմատին հաղուկ ու չաղուկ թյուն դարձնել գյուղատնտեսական գաղատակային գործի վրա, հրավիրելով գաղմիլիցիայի միջոցով խորհրդակցություններ և տալով նրանց կենդանի ցուցմունքներ:

զ) պարտավորեցնել գյուղատնտեսական իրենց պարտականությունները կատարելիս կրելու գյուղատնտեսական կրթականներ այն ձևով, վորբ ուսմանված և կենտրոնականի վարչական:

ը) իրավունքների սահմանափակման պատճառով գյուղատնտեսականների պարտականությունները վարելու իրավունքից զրկված անձերի հարկումը 2-8 ուրբու սահմաններում համարել բաղադր:

ՀԱՅ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

Նախագահի տեղակալ՝ Հ. ԱՋԱՏՅԱՆ,

ՀԱՅ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի

Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ,

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԵՆՔԻ

ՄԱՏՁԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Իշխանության նպատակն է աշխատավոր մասնակերպին մասնակից դարձնել պետական աշխատանքներին, սկսած քյուլեր կատարելու գործին, աշխատանքին, վոր ամեն մեկը հետաքրքրվի գյուղի, գյուղատնտեսության, հանրապետության շինարարության և իր կենդանի միջամտությամբ դարձնի տան յերկրի շինարարության:

Իսկական քաղաքացին նա է, վոր ձեռքերը ծառած միտքն նայում է հեռվից թե ի՞նչպես են աշխատում ուրիշները, ի՞նչպես են աշխատելուր կատարում գյուղը, քաղաքը, այլ նա յե իր կական քաղաքացին, վոր իր ուժերի շարժումով կերպով խոսնում է ընդհանուր գործին, ինքն էլ սովորում է կատարելու գյուղը և միաժամանակ սպասում բերում հանրության:

Աշխատավոր գյուղացիության հանրապետությունը կատարելու գործին մասնակից անելու առաջին ճանապարհը դա գյուղական խորհուրդներն են, սակայն դիտենք, վոր միանգամից բոլորին ներս քաշել խորհուրդների մեջ հնարավոր չէ: Ամենաշատը մի մեծ գյուղում հիսուն հոգի կարող են ընտրվել գյուղական իշխանության անդամներ: Հարց և առաջ գալիս, ինչպե՞ս անել, վոր մյուս գյուղացիները ևս մասնակցեն գյուղական աշխատանքներին: Այդ հնարավոր է լինում գյուղական կատարածուների հաստատության միջոցով:

ԻՆՉ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ Ե ՀԵՏԱՊՆԳՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հ.Ս.Խ.Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիտեների Խորհրդի կողմից 1926 թ. փետրվարի 16-ին ընդունած «Գյուղական կատարածուների մասին» որոշման պարզ և շարժական առում է. վորպեսզի գյուղական խորհուրդները հաջողությամբ ու ժամանակին կարողանան կատարել այն բոլոր կարողությունները, հանձնարարությունները, վորոնք դրվում են

ներանց՝ վրա՝ գյուղում կարգ, հանդատություն պահպանելու, գյուղացիներին անձր, ունեցվածքը ապահովելու, գյուղի բարեկարգությունն առաջ տանելու և այլն, դրա համար հիմնվում և գյուղական կատարածուների հաստատությունը:

Այդպիսով գյուղական կատարածուներն առաջին հերթին կաշմ ևն սթանդակելու, աջակցելու գյուղական իշխանությունը՝ առաջ տանելու գյուղի դործերը, այն և՛ գյուղը կառավարելու, գյուղը բարելավելու, գյուղը դարգացնելու և այլն:

Գյուղական կատարածուները, ցույց տալով գյուղխորհուրդներին այդ աջակցությունը, մասնակցելով քննհանուր աշխատանքներին, միաժամանակ իրենք ևլ սովորում ևն գյուղը կառավարել և այդպիսով իրենց համար յերաշխիք ևն ստեղծում հետագայում ընտրվելու հենց նույն գյուղխորհուրդների կազմի մեջ և լինել գյուղի ղեկավար մարմնի անդամներ:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒ

Գյուղական կատարածուները կառված ևն գյուղական խորհրդի հետ: Նրանց միջոցով և, վրա գյուղի իշխանությունը կաշմ դործադրում և այս կամ այն կարեւոր կարգադրությունները: Դրա հետևանքով և, վրա գյուղկատարածուներ նշանակելու հարցի վրա կարեւոր ուղադրություն և դարձվում և թույլ չի տրվում յուրաքանչյուրին ստանձնել, կատարել այդ պարտականությունները:

Գյուղական կատարածուներ կարող ևն նշանակվել 18-45 տարեկան այն գյուղացիներն ու ղեկավարները, վրանք սկսվում ևն ընտրական իրավունքից:

ՈՎՔԵՐ ԶԵՆ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՏԱՐԱԾՈՒ

Գյուղական կատարածու լինել չեն կարող այն գյուղացիները, վրանք ղրկված ևն ընտրական իրավունքներից, լինի դա ընտրություններին ժամանակ, լինի դա գատարանի վճուով: Յեթե մեկը չահագործող և և ընտրական հրահանգի հիման վրա ղրկված և ընտրական իրավունքներից, պարզ և, նա չի կարող կատարածու լինել: Նմանապես գյուղխորհուրդը թույլ չի առ կատարածու լինել բոլոր նրանց, վրանք իրենց կատարած հանցանքների համար դատարանի վճուով ղրկվել ևն ընտրական իրավունքներից: Յեթե գյուղական կոոպիրատիվի նախագահը, ոգտվելով իր գրու-

Թյունից, կոտորատովի գրամները կամ սպրանքը յուրացնում և և դատի տրվում, դատարանը, յենթարկելով նրան մի քանի տար-
փա սպասադրվման, կարող և միաժամանակ սահմանափակել նրա
իրավունքները, այն և՛ վոր նա մինչև հինգ տարի չունենա ընտ-
րելու և ընտրվելու իրավունք։ Ահա այդպիսիներէ մտնի և խոսքը,
վորանց գյուղխորհուրդը թույլ չի տա կատարածու լինել։ Կարող և
և այնպիսի դեպք լինել, վոր մեկը մտցված լինի գյուղական կա-
տարածուների ցուցակի մեջ, սակայն վաղը նա կատարի հանցանք-
մեկին ծեծի, դողություն կատարի և դրա համար դատի տրվի։
Գյուղական խորհուրդը կարող և այդպիսիներին (քանի զեւ. նը-
րանք դատի և քննության տակ են) զրկել գյուղական կատարա-
ծու լինելու իրավունքից։ Գյուղխորհուրդն իրավունք ունի այդ
չանելու, յեթե միայն դատի և քննության տակ գտնվող գյուղա-
ցիները հասարակական վտահություն են վայելում և կատարած
հանցանքը վարկարկելի բնութի չի կրում։

18-45 տարեկան գյուղացիները, վորոնք ընտրական իրավունք-
ների սահմանափակման կամ քննության տակ գտնվելու պատճա-
ռով չեն կարող կատարածու լինել գյուղական խորհուրդի կողմից
սուրբադրվում են 2 ուսրուց մինչև 8 ուսրի։ Այստեղից պարզ և,
վոր յեթե մեկը ընտրական իրավունքից զրկված և, բայց 46, 47
տարեկան և, նա սուրբադրվել չի կարող։ Յեթե գյուղական ըն-
տանիքի մեջ կան 5 հոգի, վորոնցից յերկուսը զրկված են ընտրա-
կան իրավունքներից և յեթե նրանց տարիքը համապատասխանում
և կատարածուի տարիքին, այդ յերկուսն ևլ սուրբադրվում են։
Յեթե գյուղխորհուրդը վորոչի և յուրաքանչյուրից վերցնել 2
ուսր, յերկուսը, լինելով մի անտեսության անդամներ, կ'վճա-
րեն 4 ուսրի։ Յեթե մի չըջանում գալատակային գործկամի վա-
րչամար կանայք ազատված են գյուղկատարածուի պարտկա-
նություններից, նրանցից, ինչպես նաև ընտրական իրավունքից
զրկված կանանցից կատարածուական տուրք չի կարելի գանձել։
Այս բոլորը նրա համար և սովում, վոր գյուղխորհուրդները մի
շարք վայրերում կատարել են խախտումներ և սխալ հասկանա-
լով ուրեքը սուրբադրել են նրանց, վորոնց իրավունք չունեին։
Վերիվ հիշված գյուղացիներից համաքած գումարները գյուղական
խորհուրդը գործադրում և նույն գյուղի բարեկարգության վրա
(դպրոցի, խրճիթ-ընթերցարանի, աղբյուրի կանուցման, վերա-
նորոգման և այլն)։

Գյուղի կառարածուի իրավունքից զրկված քաղաքացիների ցուցակը կազմվում և այս գրքային վերջում ցույց տրված № 3 ձևով :

ՈՎՔԵՐ ԵՆ ԱԶԱՏՎՈՒՄ ԳՅՈՒՂԿԱՏԱՐԱԾՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Որենքը, նկատի ունենալով մի շարք հանգամանքներ, թույլ և տալիս փոքր քաղաքացիներին ազատելու գյուղ կառարածուի պարտականություններից .

ՈՎՔԵՐ են մասնում ազատվողներին թվի մեջ . գյուղխորհուրդների նախագահները, անդամները, պալատակալին պարտկոմի անդամները, Խորհրդային և կոոպերատիվ հիմնարկությունների ու ձեռնարկությունների մշտական ծառայողները, բանվորները, գյուղգիտիկների նախագահները, նախագահություն անդամները, հիմնովի ու ֆիզիկական պարտականություն ունեցող անձինք (կույր, հաշմանդամ և այլն) , կարմիր ղեկավարների ընտանիքները, նրանց կարմիր Բանակում ծառայելու ամբողջ ժամանակի ընթացքում, կանայք ծննդաբերությունից յերկու ամիս առաջ և ծննդաբերությունից հետո մասնկան ծիծ տալու ժամանակամիջոցում, մինչև 8 տարեկան հասակի յերեխաներ ունեցող կանայք, յեթև նրանց մատին հողացող անձ չունեն (այն դեպքերում, յեթև կանայք չեն աղափված գյուղկառարածուի պարտականություններից) : Վերև հիշված քաղաքացիներից նրանք, վարոնք վաղը կամ մյուս որը կ'թողնեն իրենց ծառայությունը, վարոնք չեն ընտրվել գյուղխորհրդի անդամ, նախագահ և այլն, պարզ և, վար նույնպես պարտավար են կառարել գյուղկառարածուի պարտականությունները, ինչպես մյուս գյուղացիները :

Գյուղխորհուրդներին իրավունք և տրվում բացառիկ դեպքերում ազատել գյուղական կառարածուի պարտականություններից նաև նրանց, վարոնք ծիծի միակ աշխատավոր ձեռքերն են կամ յեթև անտեսությունը տուժել և տարերային դժբախտությունից կամ աշխատավոր ձեռքի պակասությունից : Յերեվակայք Մարկոսը ծիծի միակ անդամն և, իսկ ծուխը մեծ և, յերեխաները չառու մանր, կամ հենց նույն Մարկոսի արտը կարկուտը ծեծել և, մուկը վաշալրել և և այլն : Պարզ և, վար Մարկոսի հարցը գյուղական խորհուրդը պարտավոր և քննության առնել իր նիստում և ազատել կառարածուի պարտականությունից :

Գաղափարական զործկոմիտեի վորոշմամբ կանայք նույնպես կարող են ազատվել դյուղկատարածուի պարտականություններից, ի նկատի ունենալով տեղական կենցաղային պայմանները: Հ.Ս.Պ.Հ. բոլոր գաղափարական, նման վորոշումներով կանայք ազատված են կատարածուական պարտականություններից:

Վերջապես դյուղկատարածուի պարտականություններից ազատվում են դյուղի հետ կապված այն բանվորները, վորոնք աշխատում են յերկաթուղու դժի վրա, հանքերում և այլ ձեռնարկություններում: Որինակ՝ Լոռի-Փամբակի մի շարք դյուղերի բնակիչներ, ունենալով դյուղում տնտեսություն, գնում են ծառայելու յերկաթուղագծի վրա: Կարելի չե՞ նրանց վրա դնել կատարածուի պարտականությունները: Ի հարկե վուշ: Նման դյուղերում (դրանց թիվը փոքր է), վորտեղ բանվորության գնացող բնակիչների թիվը փոքոր է, գաղափարական զործկոմի վորոշմամբ կարելի չե չմտցնել կատարածուական հաստատություն:

Գյուղի կատարածուի պարտականությունից ազատված քաղաքացիների ցուցակը կազմվում է այս դրբույկի վերջում տրված № 2 ձևով:

ԳՅՈՒՂԿԱՏԱՐԱԾՈՒԻ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Կենտգործկոմի Նախագահության 1926 թ. փետրվարի 16-ի վորոշմամբ դյուղկատարածուների աշխատելու ժամկետը սահմանված էր մեկից մինչև յերկու ամիս: Նկատի առնելով վոսայդ ժամկետը յերկար է, Կենտգործկոմի նախագահությունը 1928 թ. մարտի 28-ին վորոշեց այդպիսին կրճատել և դարձնել մինչև յերկու շաբաթ: Ներկայումս բոլոր կատարածուները պարտավոր են յուրաքանչյուր հերթին աշխատել միայն 14 օր:

ՅԵՐԿՈՒ ԿԱՐԳԻ ԳՅՈՒՂԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐ ԿԱՆ

Գյուղական կատարածուներ լինում են յերկու կարգի. ալադ և կրտսեր: Կրտսեր կատարածուները յենթարկվում են ալադ կատարածուին և կատարում նրա կարգադրությունները: Ի՞նչ հերթին դյուղական ալադ կատարածուները կապված են անմիջականորեն դյուղխորհրդի նախագահի կամ դյուղխորհրդի լիազորի հետ, ղեկավարվելով վերջիններիս ցուցմունքներով, հրահանգներով: Ալադ կատարածուները պետք է լինեն անպատճառ դրագետ դյուղացիներ, այսինքն՝ պետք է իմանան դրել,

կարգալ, կարգացածը հասկանալ: Գյուղական կրտսեր կատարածունները իրենց ծառայութեան ընթացքում չեն կարող գյուղից րացակայել առանց ավագ կատարածուի թույլտուութեան, իսկ ավագ կատարածուն՝ առանց գյուղխորհրդի նախագահի կամ լիազորի թույլտուութեան:

ՈՎ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻՆ ՅԵՎ ԻՆՉ ՁԵՎՈՎ

Գյուղական կատարածուին նշանակում է գյուղական խորհուրդը: Գյուղական խորհուրդը կատարածուններ նշանակելու, նախ՝ պետք է գյուղը բաժանի մի քանի թաղամասերի, այն հաշվով, վոր յուրաքանչյուր թաղամասում լինի քաղաքացիներից մինչև 300 բնակիչ: Յեթե գյուղը ունի 900 բնակիչ, գյուղխորհուրդը ավագը դեպքում գյուղը բաժանում է յերեք թաղամասի, այսինքն՝ № № 1, 2, 3, և ամեն մի թաղամասի համար նշանակում է մեկ կատարածու, նկատի առնելով, վոր որևէք 300 բնակչին մեկ կատարածու չի թույլ տալիս ունենալու: Այդպիսով, հիշյալ գյուղը կունենա յերեք գյուղկատարածու, վորոնցից մեկը կլինի ավագ, իսկ յերկուսը՝ կրտսեր: Ընդհանրապես յուրաքանչյուր գյուղը յերեք կատարածուից վոչ պակաս պետք է ունենա, յեթե անգամ գյուղի բնակիչների թիվը լինի 100, 200, կամ 250:

ԳՅՈՒՂԱԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՊԵՏԲ Ե ԿՄՁՄԱԿԵՐՊՎԱԾ ՁԵՎ ՈՒՆԵՆԱ

Գյուղական խորհուրդները գյուղկատարածունների նշանակումներին չպետք է պատահական ընույթ առն: Կան գյուղխորհուրդներ, վորոնք այսօր առաջին պատահածին են նշանակում, վաղը մյուսին, յերրորդին և այլն: Սա անթույլատրելի չի, վորի դեմ պետք է կռիւլ: Գյուղխորհուրդը կատարածունների նշանակումներին պետք է առ կազմակերպւած ընույթ: Սա ի՞նչ է նշանակում, այն, վոր գյուղխորհուրդը վաղորդք պարտավոր է այս գրքույկի վերջում ցույց տրված № 1 ձևով կազմել 18—15 տարեկան այն գյուղացիների ցուցակը, վորոնք պետք է առնեն կատարածուական պարտականութիւններ, մեկ տարւա մեջ և այդպիսին ներկայացնել գալառակային գործկոմին՝ ի հաստատութիւն: Գյուղամասերի բաժանումը և գյուղական կատարածունների թիւը մեկ տարւա համար հաստատելուց հետո, գյուղխորհուրդը այդ

ցուցակը կախում է գյուղխորհուրդի շենքում, վարպետի բոլորը կա-
րողանան ծանոթանալ նրա հետ: Յեթե գյուղը ունի 900 շունչ, մեկ
տարվա համար կարելի է լինի կադմեկ 78 հոգու ցուցակ այն հաշ-
վով, վար մեկ հերթապահության համար պահանջվում է 3 կատա-
րածու, յուրաքանչյուրը 2 շաբաթ աշխատելու ժամկետով: Այս-
տիկից պարզ է, վար 52 շաբաթվա, այսինքն՝ մեկ տարվա ընթաց-
քում կպահանջվի $52:2=26 \times 3=78$ կատարածու: Գյուղխորհուրդը
միմասնակի պարտավոր է այդ ցուցակը կադմեկիս նշանակել անձ-
նավորանորոշներ, վարպետի սրանք, կատարածուններից վարեն մեկի
ժամանակից առաջ դուրս դալու գեպքում, կատարեն նրանց պար-
տականությունը:

Համաձայն այդ ցուցակի գյուղական խորհուրդը նշանակում է
գյուղական կատարածուներ: Ծխերի հերթի կարգը վորոշվում է
ծխերի տնտեսական և աշխատավորական կարողություն համեմատ:
Յեթե Մեկընը ուժեղ տնտեսություն ունի, աշխատող ձեռքեր
չառ ունի, պարզ է, վար նույնիսկ ամենախուսապան դաշտային
աշխատանքի ժամանակ այդ ծխից առաջին հերթին մեկին կատա-
րածու նշանակելով, նրա տնտեսությունը չի տուժի և արտունջ էլ
չի լսվի: Ընդհակառակը անհարմար բան կստացվի, յեթե մեկ
ծուխ թույլ տնտեսություն ունի, սգնող ձեռքերից դուրկ է և և ա-
ռաջին հերթին այդ ծխից նշանակվի: Հարցի այս կողմի վրա
գյուղխորհուրդը պետք է լուրջ ուշադրություն դարձնի, ապա ին
վոչ կատարածուական պարտականությունները մի բնու կդառնան
գյուղացու համար, վորից նա կաշխատի մի կերպ պրծնել, և չի
մտածի մի բան սովորել:

Նշանակված գյուղ կատարածուների աշխատանքը հաշվառման է
յենթարկվում՝ համաձայն սույն գրքույկի վերջում դրված ձև № 1-ի,
վորտեղ պետք է ցույց տրվի յե՞րբ և անցի աշխատաքի և յե՞րբ և
վերջացրել կատարածուական ծառայությունը: Այս հաշվառումը
անհրաժեշտ է նրա համար, վոր վաղը, մյուս օրը խոսակցություն-
ներ չլինեն, թե ես մեկը քիչ և ծառայել, են մեկը շատ, կամ բոլո-
րովին չի ծառայել և այլն: Վորպետի նշանակված կատարածուներն
իրենց ժամանակին հերթական կարգով աշխատանքներին անցնեն,
գյուղխորհուրդը անկախ այն հանգամանքից, վոր պատի վրա
կպցրած ցուցակով հայտարարել է, այնուամենայնիվ պետք է յե-
րեք սր առաջ տեղեկացնի նրանց, վոր այն ինչ օրը ձեր հերթն է:
Վորովհետե գյուղ է ելի. մեկը անդրադետ, յերկրորդը աշխատան-

քի մեջ թաղված, կարող են մոռանալ, թե այսինչ որը պիտի կատարածուական պարտականություններին անցնեն և չգան:

Գյուղական կատարածուների առաջին հերթի ժամանակը լրանալուց հետո, աշխատանքի յեն անցնում յերկրորդ, յերրորդ, յորրորդ և այլն հերթի կատարածուները, մինչև տարվա վերջը, վերից հետո կազմվում են նոր ցուցակներ և նշանակվում նոր կատարածուներ: Գյուղական կատարածուների սխալ նշանակման մասին բողոքները պետք և արվեն դավառակային դարձկոմիտե: Բողոք ներկայացնելը չի ազատում գյուղական կատարածուի պարտականությունները կատարելուց մինչ բողոքի լուծումը:

ՎՈՉ ՎՈՔ ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՇՐԱԺԱՐՎԵԼ

Յուրաքանչյուր գյուղացի պետք և իմանա, վոր յեթե գյուղ-խորհուրդը նրան նշանակել և կատարածու, նա պարտավոր և յեն-թարկվել գյուղխորհրդի վորոշման և ժամանակին զայ իր պարտականությունները կատարելու, այլապես հրաժարվողները կարող են յենթարկվել քրեական պատասխանատվության:

ԳՅՈՒՂԱԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՇԱՄԱՐ

Գյուղացին յերկու շարաթ և գյուղկատարածուի պարտականություններ կատարում և այդ ժամանակաշրջանում՝ նա ներկայացնում և իրենից վորպես պետական պաշտոնյա, ուստի նրա բոլոր որինավոր կարգադրությունները գյուղացիները պետք և կատարեն, այլապես չկատարողները կյենթարկվեն պատասխանատվության: Քրեական Որենագրքի համաձայն, վորպես հանրային ապահովությունն ու խաղաղությունը պաշտպանող մարմինների կարգադրությունները չկատարողներ: Այս հանգամանքը յուրաքանչյուրը պիտի հիշե և չմոռանա, վոր գործն այն ժամանակ առանձ կզենա, յերբ նա ժամանակին և արագ կատարի կատարածուի յուրաքանչյուր որինավոր կարգադրություն, տեսնք հենց տան բակերը, փողոցները մաքուր պահելու, հրդհներե և ընդհանրապես դժբախտ պատահարների առաջն առնող միջոցների և այլն վերաբերմամբ: Իր հերթին գյուղական կատարածուն պետք և գիտակցի և չպետք և մի բոլի մոռանա, վոր ինքը իր ծառայության ժամանակամիջոցում պաշտոնյա յե, թեև առանց վարձա-

տրութեան, և վոր յուրաքանչյուր իր քայլը պետք և չափած, ձևված լինի: Այն գյուղկատարածունները, վորոնք կկատարեն որինադանցութեան, կյանթարկվեն նույնպես քրեական պատասխանատվութեան:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԵՊԲԵՐՈՒՄ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՏՐԱՍԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Ամեն անգամ, յերբ կարիք դրացվի, գալառի, գալառակի միլիցիական մարմինները հատարական կարգն ու ապահովութեանը պահպանելու, այս կամ այն հանցավոր մարդկանց բռնելու և ուղեկցելու համար կարող են իրենց տրամադրութեան տակ վերցնել գյուղական կատարածուններին: Բերենք մի որինակ. մի գյուղում կատարվում է սպանություն: Սպանողը, ոգավելով դրութեանից, փախչում և մտախառնալու, վորին անհրաժեշտ և բռնել: Հայտնում են դավաճակային միլիցիային, վորը մի քանի միլիցիաներն երով գալիս և գյուղը, իր տրամադրութեան տակ և առնում տվյալ գյուղի, իսկ անհրաժեշտութեան դեպքում նաև մի քանի գյուղերի կատարածուններին և ընդհանուր ուժերով ձերբակալում հանցավորին: Յեթև գյուղական կատարածունին գնեք են տվել, այդպիսին կարող և դործադրել ծայրահեղ անհրաժեշտութեան դեպքում, նախադրուշացներուց հետո՝ իրեն վրա կատարած հարձակումը հետ մղելու, յեթև պաշտպանութեան ուրիշ վոչ մի միջոց ալլիս հնարավոր չէ, ալլ անձանց՝ նրանց կյանքին ու առողջութեանը սպառնացող հարձակումներից պաշտպանելու համար և վերջապես կաշնաւորի փախչելու փորձ անելիս, յերբ նրան բռնելու ալլ միջոցներ չկան:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կարելի չէ համոզված ասել, վոր գյուղական կատարածունների մեծ մասը պարզ չեն դիտակցում իրենց անելիքները, չգիտեն վո՞րոնք են իրենց պարտականութեանները: Վորպիսիք հետագայում յուրաքանչյուրը մանրամասն կերպով հնարավորութեան ունենա ծանոթանալու իր բոլոր անելիքների հետ, բերվում է ամբողջովին որենքի այն դրուիք, վորտեղ խոսվում և գյուղկատարածունների պարտականութեաններ մասին:

Գյուղական կատարածունների վրա պարտականութեան և գրվում:

ա) Հսկել գյուղի կարգի ու անդորրութեան և միջոցներ ձեռք առնել վերականգնելու խախտված կարգը, հսկել, համաձայն պարտադիր վորտումների և կանոնների, գյուղի մաքրութեան և առողջապահական դրութեան և ճանապարհների կանոնաւոր վիճակում պահելուն:

բ) Հաղորդել գյուղխորհրդի նախագահին և գավառակային միլիտանին իրենց գյուղամասում առկա ունեցած հանցադործութունների, ինքնապաշտպանութունների, գտնված մարդկային գիւղի մասին և պահպանել նրանց այն դրութեամբ, վորի մեջ դրուելու է գիւղը, մինչև միլիցիայի կամ քննիչ իշխանութեան մարմինների գալը, թույլ չտալով վրէժ վրէժի նույնիսկ մտակնայ գիւղին:

գ) Հաղորդել գյուղխորհրդի նախագահին և գավառակային միլիտանին գյուղ ժամանած յուրաքանչյուր կողմնակի անձի մասին, ինչպես և ողի քաշելու, դատալիքներ յերեւալու և ընդհանրապես, իրենց կարծիքով կասկածելի անձանց և ակնհայտնի հանցադործ տարրերի ու մոլորված անասունների մասին:

դ) Ուղեկցել գյուղխորհուրդ կամ միլիցիա՝ բոլոր կայանաւորված անձանց, այլև ուղեկցել մինչև մոտակա գյուղխորհուրդ ուղարկվող կալանավորին:

Ծանոթութիւն. — Ուղեկցող պահակութեան նշանակվում են զենքի գործածութեան ծանոթ գյուղական կատարածուներ: Ուղեկցման ժամանակ նրանց զենք և արվում գավառակային գործկոմից կամ գյուղխորհրդից:

ե) Հսկել, վոր բնակչութեանը կատարի հրդեհներ և ընդհանրապես դժբախտ պատահարները կանխող կանոնները:

զ) Հրդեհի, հեղեղման և այլ տարերային աղետների ժամանակ միջոցներ ձեռք առնել պաշարելու նրանց զեմ և աղատելու թե՛ մարդկանց և թե՛ նրանց գույքը:

ը) կատարել բնակչութեանը աշխատանքի պարհակի յենթարկելու հանձնարարութիւնները, հրդեհների, հեղեղումների և այլ տարերային աղետների զեմ պաշարելու համար:

թ) Հաղորդել գյուղխորհրդի նախագահին գյուղում հայտնված համաճարակ հիւանդութիւնների բոլոր դեպքերի մասին:

ժ) Ոժանդակել իշխանութեան մարմիններին հսկելու, վորպէսզի անտառները չկտրուվեն, արտերը, բանջարանոցները, խոտառեղերն ու այգիները չարածացնեն և ընդհանրապես բոլոր նը-

ման որինազանցություններն զեւթում զրաւոր կամ բերանացի հաղորդել զյուզխորհրդի նախագահին կամ զավառակային միւլպետին .

Բ) ոժանդակել միլիցիային հսկելու տոնավաճառների և շուկաների կարգապահութեան վրա .

Ը) ուղեկցել մինչև մոտակա գյուղը զավառակային գործկոմներին կողմից զավառային կենտրոն ուղարկվող թանգարժեք իրերին .

Խ) ոժանդակել համապատասխան մարմիններին հայանաբերելու հարկ չվճարողներին , հողի տարածութեանը թաղցնողներին և այլն .

Ծ) հայտաբերել գյուղի բնակիչներին իշխանութեան մարմինների բոլոր կարգադրութեանները , ազդարարել ընդհանուր ժողովների մասին , հանձնել հարկաթերթեր , ծանուցադրեր և այլն .

Կ) կատարել գործող որենդրութեամբ և այլ առթիւ ներքին Գործերի ժողովրդական կոմիտեի առի կողմից հատուկ հրահանգներով գյուղական կատարածուների վրա դրվող բոլոր պարտականութեանները .

Հ) գյուղական ավագ կատարածուների վրա պարտականութեան և դրվում կազմել արձանագրութեաններ ավայլ շրջանում գործկոմների պարտադիր վորտչումների խախտման մասին և այլ արձանագրութեաններն ուղարկել զյուզխորհրդի նախագահին .

Ճ) փոստը գյուղից զավառակային կենտրոն տանելը , յեթե տարածութեանը այդ յերկու կետերի միջ 10 կիլոմետրից ավելի չի :

ՄԱՍՆԱՐԱՅՈՒՄ.—Այն դեպքերում , յերբ հիշյալ վայրերի միջանկյալ տարածութեանը 10 կիլոմետրից ավելի չի , արվյալ գյուղի կատարածուն փոստը հասցնում և հարեւան գյուղը և դիտանցիոն կարգով փոստը հասցվում և զավառակային կենտրոն :

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՆՔԱՑՔՈՒՄ ՅԵՎ ՆՐԱՆԻՑ ՇԵՏՈ ԶԵՆ ՅԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎՈՐՅԵՎԵ ՊԱՐՀԱԿԻ

Եթե գյուղացին անցել և կատարածուական պարտականութեաններին և այլ ժամանակաընթացքում հայտարարում են մի ուրիշ պարհակ , ասեմք գյուղի գետի ափերն ամրացնելու համար , նա ազատվում և գետի ափերի ամրացման աշխատանքներից : Նույն այլ գյուղացին չի յենթարկվում վորևև այլ հասարակական

պարհակի նաեւ կառարածուական պաշտօնը կատարելուց 6 ամիս
հետո: Բերենք մի օրինակ. Մարկոսը վերջացրել է գյուղկատա-
րածուական ծառայութեանը հունվարի 1-ին, ուրեմն մինչև հու-
լիսի 1-ը յեթե գյուղում հայտարարվի այս կամ այն պարհակը,
Մարկոսին վաղ վաղ չի կարող հարկադրել վոր գնա այդ նոր պար-
հակը կատարի: Նրա փոխարին մասնանշված ժամանակամիջո-
ցում այդ պարհակը կառնեն գյուղի այլ անտեսութեանները:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ԿՐՈՒՄ ԵՆ ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐ

Բացի նրանից, վոր գյուղկատարածուները ունեն վկայական
գյուղխորհրդի ստորագրութեամբ (տես ձև № 4), նրանք պար-
տաւոր են իրենց սրբոտականութեանները կատարելիս նաեւ կրել
կրճառչաններ, վորոնք գործկոմների կողմից ուղարկված են
գյուղխորհուրդներին: Դա անհրաժեշտ է նրա համար, վոր յու-
րաքանչյուր քաղաքացի խմանա թե ո՞վ է ներկայումս փաստորեն
կատարում կատարածուի պարտականութեանները:

ՆԱՀՐԱԺԵՇՏ Ե ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԵՆՔԸ ՅԵՎ ԼԱՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՆԵԼ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ՄԵՋ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Յերևանի գաղաու-
յին գործկոմի հրահանգիչները, հետադասելով Ղամբարուի գա-
ղաուակում գյուղական կատարածուների հաստատութեանը, շատ
ծիշտ գրում են: «Գյուղական կատարածուների հաստատութեանը
յերևու տարվա աշխատանքի վորձն ունի և գյուղական մաս-
սանների մեջ լայն արձագանք է գտել, այնուամենայնիվ նրա նպա-
տակներն ու իրավունքի հարցերը մինչ այժմ մուլթ են գյուղացի-
ութեան և գյուղկատարածուների համար: Գյուղկատարածուների
որենքը պարզաբանվում է միայն գյուղխորհուրդների նիստերում և
բացառիկ դեպքերում հասարակական փոքրաթիվ ժողովներում:
Մինչ այժմ գյուղխորհուրդները, գաղաուակային գործկոմը և,
վոր կարեւոր է, գաղաուակային միջոցաւոր վաղ մի դաստիարակչական
աշխատանք չեն տարել և այլն»:

Յեւ իսկապէս. յեթե մեր գյուղերում յերբեմն գյուղկատա-
րածուների վրա նայում են վորպէս մի «գղիբի», յեթե նրանց վրա
գնում են այնպիսի պարտականութեաններ, ինչպիսին և դրասեն-

յակներէ մաքրելը կամ գյուղը գնացողի ձեռն սանձը բռնելը, դա
հետեանք և նրան, վոր տեղերը քիչ րան են տրել ծանոթացնելու
գյուղացիներին գյուղկատարածուներէ որենքի հետ և ջանք չեն
թափել գյուղկատարածուներէ մեջ տանելու անհրաժեշտ դատարա-
րակշական աշխատանք: Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահութունը գործնական ատաջարկներէ մեջ մասնաւոր ի
այդ րացը և առաջարկել և տեղական մարմիններին լուրջ ուշա-
դրութեան դարձնել գյուղկատարածուներէ մեջ տարւելիք դատ-
արարակշական աշխատանքներէ վրա: Անհրաժեշտ և, վոր գյու-
ղական խորհուրդները, գաղառակային գործկոմները, գաղառա-
կային միւլակները, գաղգործկոմներէ վարչաթիւները պարբե-
րաբար հրապիրեն գյուղկատարածուներէ գաղառակային խոր-
հրդակցութեաններ, կազմակերպեն նրանց համար գրույցներ,
դատարարութեաններ, պարգաբանեն նրանց անելիքները, աշխա-
տանքի ձեւերը, սովորեցնեն նրանց կարգապահութեան և, վոր
կարեւոր և, գյուղացիներէ կողմից կատարվող կատարածուական
այդ աշխատանքներն աշխարհի պարամաններէ մեջ դնեն, վոր քա-
ղաքացիները ծանոթանան առօրյա հիմնական որենքներին, այդ
որենքներին իրազեկ դարձնեն գյուղացիութեան և իրենց վերապ
ողտակար լինեն գյուղին:

Հայկենտգործկոմի

Կազմրամնի վարիչի տեղակալ՝ Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

(*Prüfung in der 1. Klasse*)

iii) $\Phi_{Jn+1}(\omega) = \Phi_{Jn}(\omega) + \frac{1}{n+1} \Phi_{Jn+1}(\omega)$

(Upr. № . 4444).

..... 192 *μ. Infusoria*

(U_{pa}. № , 44m).

դիւռ դիւ կատարածութենքի (18—45 տարեկան)

(Կաղնիված և մեկ տարվա համար)

Գլուղխորհրդի նախագահ՝ (ստորագրութիւն)

..... 192 *μ*.

» քարառուղար՝ (ստորագրութիւն)

264 № 2.

(Որոշման համար)

Հաստատվել է՝

ա) Գյուղխորհրդի

«.....» 192 թ. նիստում
(Արձ. № , կետ)

բ) Գ. վարակի գործկոմի

«.....» 192 թ. նիստում
(Արձ. № , կետ)

ՑՈՒՑԱԿ

գյուղի կատարածուի պարտականությունից
ազատված քաղաքացիների (18 45 տարեկան) .

(կազմված է մեկ տարվա համար)

գյուղի անունը	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	Ն Ի Մ Ե Ց	ԻՆՉ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ Ե ԱՋԱՏԱԿԵԼ	ՄԱՆՈՔԱՅԻՆ
			ա) Գյուղի անունը և գյուղխորհրդի նախագահ, անդամ, բ) գյուղի օրինակի նախագահ, նախագահության անդամ, գ) խորհրդային և կոոպերատիվ հիմնարկների և ձեռնարկների մշտական ծառայող, բանվոր, դ) հիվանդ, հաշմանդամ, յե) կարմիր բանակայինների բնասանիքի անդամ, զ) գյուղխորհրդի վարչապետ, ազատվածների, վորպեա չբանվոր և տարբերային զբաղվող յանհանից տուժած:	
1	2	3	4	5
1	Վարդանյան Հակոբ Միսակի	38	Հաշմանդամ	

Գյուղխորհրդի նախագահ՝ (ստորագրության)

«.....» 192 թ.

»

քարտուղար՝ (ստորագրության)

ՁեՎ № 3.

(Որինակի վրա)

Հաստատվել է՝

ա) Գյուղխորհրդի

..... 192 թ. նիստում

(Արձ. №, կես ..).

բ) Գավառակի գործկոմի

..... 192 թ. նիստում

(Արձ. №, կես ..).

ՑՈՒՑԱԿ

..... գյուղի կատարածուի իրավունքից զրկված
քաղաքացիների (18 - 45 տարեկան)

Դեմ Բաց Կողմ Խմբ.	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	Տ ա ր ի թ	Ընտրական հրա- նաչգի վճար հող- վածի հիման վրա և զրկված և վերական լինել	Տնտեսական դասի թյունը	Տարբեր չափը		ԾԱՆՈԹԱԳՈՒՆ
					Ռուր.	Կողմ	
1	2	3	4	5	6	7	8
1	Արրահամյան Գևորգ Վահանի	42	Հող. 14-ր)	Ունեւոր	8		

« » 192 թ.

Գյուղխորհրդի նախագահ՝ (ստորագրութ յուն)

քարտուղար՝ (ստորագրութ յուն)

2. U. 10. 2.

264 № 4.

(*Prithu malyaka*)

ԳՅՈՒՂԱԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ

1928 *μ*.

No

ՎԿԱՅԱԿԱՆ

Տրվում է սույն վկայականը քաղ. Մատթեւոս Մկրտիչի Նավասարդյանին, ս.ռ. ա.ին, վրբ. նա նշանակված է գլուղական կատարածու 1928 թ. հունիսի 1-ից մինչև հունիսի 15-ը:

Քչու ղխորհրդի նախագահ՝ (ստորագրութիւն)

» քարտուղար՝ (ստորագրութիւն)

(-275.10.20)










ՀԱՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003255

9472 15 407.



064.